ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 335
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքը (Ծաղկունք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Խոյ համայնքի (Ծաղկունք բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքը (Ծաղկունք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի (Ծաղկունք բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04–052–0215–0005 կադաստրային ծածկագրով 3,8184 հա մակերեսով և 04–052–0214–001 կադաստրային ծածկագրով 0,9548 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր	04–052–0215–0005 կադաստրային ծածկագրով 3,8184 հա մակերեսով և 04–052–0214–001 կադաստրային ծածկագրով 0,9548 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Խոյ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Խոյ համայնքի (Ծաղկունք բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի (Ծաղկունք բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «21» «օգոստոսի» 2024 թ.